Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

24 դեկտեմբերի 2015 թվականի N 56

---

13. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգին՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Հ. Աբրահամյան**

2015 թ. դեկտեմբերի 29
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
դեկտեմբերի 24-ի նիստի N 56
արձանագրային որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

I. Ներածություն

1. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի երիտասարդական աշխատողի պատրաստման համակարգ, ինչը բացասաբար է անդրադառնում երիտասարդական պետական քաղաքականության, երիտասարդական պետական ծրագրերի իրականացման գործընթացի արդյունավետության վրա: Հայաստանում երիտասարդական աշխատողի համակարգի ներդրման և արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է կանոնակարգել երիտասարդական աշխատողի ինստիտուտի նպատակն ու խնդիրները, երիտասարդական աշխատողի գործունեության ոլորտը, ինչպես նաև երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման մեթոդներն ու գործիքները:

2. Վերջին երեք տասնամյակների ընթացքում աշխարհի տարբեր երկրներում հասարակական և համայնքային կյանքի բարելավման հարցերում կարևոր գործոն է երիտասարդական աշխատանքը: Հայաստանի անկախացումից հետո երիտասարդական հասարակական մի շարք կազմակերպություններ սկսել են իրականացնել երիտասարդական աշխատանք:

3. Երիտասարդական աշխատանքի զարգացման վերաբերյալ պետական ծրագրի առկայությունը կմիավորի երիտասարդներին աջակցելու պետության և առանձին կազմակերպությունների ջանքերը, կխթանի երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային հարցերում, նրանց անհատական զարգացումը, կնպաստի երիտասարդական աշխատանքի ճանաչելիությանը:

II. Ընդհանուր դրույթներ

4. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում երիտասարդական աշխատողի ինստիտուտի նպատակն ու խնդիրները, երիտասարդական աշխատողի գործունեության ոլորտը, երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման համակարգը:

5. Երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է: Այն

ներառում է երիտասարդների հետ, երիտասարդների համար և երիտասարդների կողմից իրականացվող սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքացիական և քաղաքական բնույթի միջոցառումներ: Սրանք հիմնականում կրթական համակարգից դուրս իրականացվող միջոցառումներ են, որոնք կրում են հաճախ ոչ ֆորմալ բնույթ:

6. Երիտասարդական աշխատանքի հիմնական խնդիրներից մեկն է երիտասարդների համար իրենց ապագան կերտելու հնարավորությունների ստեղծմանն աջակցելը:

7. Երիտասարդական աշխատանքը տարբեր ձևաչափեր ու բովանդակություն կարող է ունենալ՝ սկսած երիտասարդական կենտրոններից, մարզական միջոցառումներից մինչև սոցիալական ձեռներեցություն, քաղաքացիական ակտիվիզմ, ժամանցի կազմակերպում և այլն:

III. Հիմնական հասկացություններ

8. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **երիտասարդ**՝ Հայաստանի Հանրապետության 16-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 16-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում.

2) **երիտասարդական հասարակական կազմակերպություն՝** Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական այն կազմակերպությունները, որոնք իրենց կանոնադրության համաձայն զբաղվում են երիտասարդության հարցերով և/կամ իրականացնում են երիտասարդական աշխատանք.

3) **երիտասարդական աշխատանք՝** երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանք կամ աշխատանք, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը.

4) **երիտասարդական աշխատող՝** անձ, որն իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ նպաստելու երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին, զարգացնելու նրանց ներուժը և օգնելու երիտասարդներին լիարժեք հաստատվելու հասարակության մեջ:

IV. Նպատակը և խնդիրը

9. Կանոնակարգի նպատակն է՝

1) խթանել Հայաստանում երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացումը այս ոլորտում առկա գիտելիքների և կուտակված հմտությունների հիման վրա՝ հաշվի առնելով միջազգային փորձը.

2) կայացնել երիտասարդական աշխատողի ինստիտուտը:

10. Կանոնակարգի խնդիրն է՝

1) երիտասարդական աշխատանքի ճանաչելիության ապահովումը բոլոր մակարդակներում.

2) երիտասարդական աշխատողի հմտությունների և կարողությունների կատարելագործման շարունակական ապահովումը.

3) երիտասարդական աշխատանքի արդյունավետության բարձրացման ապահովումը:

V. Երիտասարդական աշխատողի գործունեությունը

11. Երիտասարդական աշխատողը իրազեկ է երիտասարդության իրական կյանքին, նրա տեղական պայմաններին, կարող է գնահատել իրավիճակը և երիտասարդ մարդկանց կարիքները, ընտրել և կիրառել աշխատանքի համապատասխան մեթոդներ, իրականացնել կատարվող աշխատանքի ազդեցության վերլուծություն:

12. Երիտասարդական աշխատողն աշխատում է երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ, մշակում, իրականացնում և գնահատում է երիտասարդական ծրագրեր ու նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ:

13. Երիտասարդական աշխատողն ակտիվորեն մասնակցում է հասարակական գործընթացներին, օժանդակում է հասարակական գործընթացներին երիտասարդության ներգրավվածության մակարդակի բարձրացմանը և մասնակցության խթանմանը:

VI. Երիտասարդական աշխատողի պատրաստումն ու վերապատրաստումը

14. Երիտասարդական աշխատողի պատրաստումը և վերապատրաստումը կարող են կազմակերպվել երեք կրթական մեթոդների՝ ֆորմալ կրթական մոդուլների, ոչ ֆորմալ կրթության և էլեկտրոնային ուսուցման համադրությամբ:

15. Քանի որ երիտասարդական աշխատանքը հիմնականում կիրառում է ոչ ֆորմալ կրթության գործիքարանը, այս ոլորտի մասնագետների պատրաստումը ևս պետք է հիմնականում հիմնված լինի ոչ ֆորմալ կրթության սկզբունքների և մեթոդական մոտեցումների կիրառման վրա:

16. Արդի հասարակության մեջ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (այսուհետ՝ ՏՀՏ) դարձել են կարևոր գործոն, ինչպես նաև երիտասարդական աշխատանքը նույնպես ներգավում է ավելի ու ավելի մեծ ծավալների ՏՀՏ գործիքներ (գործընթացների կազմակերպման և վերահսկման առցանց (օնլայն) հարթակներ (պլատֆորմ), էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային մասնակցություն, բազմազան սոցիալական ցանցեր, առցանց գործիքներ և այլն): Համապատասխանաբար կարևորվում է նաև երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացները նույնպես էլեկտրոնային ուսուցման տարրերով համալրումը, ինչպես նաև ՏՀՏ արդի գործիքարանին ծանոթացման և դրա կիրառման մոդուլների ներառումը:

17. Առանձնահատուկ կարևորություն պետք է տրվի նաև ուսուցողական և գործնական աշխատանքների համադրմանը, քանի որ ստացված գիտելիքները և

մեթոդները հնարավոր է լիովին յուրացնել միայն երիտասարդության ոլորտում երիտասարդների տարբեր համայնքների հետ գործնական աշխատանքների իրականացման պարագայում:

18. Երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստումը կարող է ներառել բազային կուրս, որը կկազմակերպվի երկարաժամկետ բազմափուլ ուսուցման ֆորմատով: Ծրագիրը բաղկացած կլինի մի քանի առկա դասընթացներից, որոնց միջև ընկած ժամանակահատվածում մասնակիցները կաշխատեն իրենց գործնական առաջադրանքների վրա, ինչպես նաև կանցնեն էլեկտրոնային հեռավար ուսուցում ծրագրի համար նախագծված և կառուցված համապատասխան էլեկտրոնային ուսուցման հարթակում:

19. Բազային կուրսից բացի՝ կարող են նախագծվել նաև թեմատիկ դասընթացներ երիտասարդական աշխատանքի տարբեր մասնագիտական ոլորտների, ինչպես նաև որոշակի հատուկ թիրախ խմբերի (օրինակ՝ գյուղական երիտասարդություն, հաշմանդամություն ունեցող անձինք, փախստականներ) և համայնքների հետ աշխատանքի ոլորտներում: Այս թեմատիկ դասընթացները կարող են կիրառվել ոչ միայն երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստման, այնպես էլ վերապատրաստման նպատակներով:

20. Երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման գործընթացը կազմակերպում և համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

21. Երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման կարգը, ծրագիրն ու ուսումնական ուղեցույցը մշակում է Նախարարությունը:

22. Երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման ծրագիրն ու ուղեցույցը կազմվում են երիտասարդական աշխատողի և աշխատանքի մասին հետազոտության և միջազգային փորձի ուսումնասիրության համադրմամբ:

23. Երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման մասին Նախարարությունը պաշտոնական գրությամբ տեղեկացնում է համապատասխան շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև իր պաշտոնական կայքում տեղադրում է հայտարարություն՝ նշելով դիմումների ընդունման վերջնաժամկետի, վերապատրաստման օրերի, վայրի մասին:

24. Երիտասարդական աշխատողը պատրաստմանը և վերապատրաստմանը մասնակցելու համար պետք է Նախարարություն ներկայացնի համապատասխան դիմում: Դիմումին կից ներկայացվում է ինքնակենսագրություն:

25. Երիտասարդական աշխատողի հերթական վերապատրաստումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ:

26. Պատրաստման և վերապատրաստման արդյունքում երիտասարդական աշխատողին տրվում է վկայական, որի ձևը հաստատվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի անհատական հրամանով:

27. Պատրաստման և վերապատրաստման արդյունքում երիտասարդական աշխատողին տրվող վկայականների հաշվառման մատյանը վարում է Նախարարությունը: